ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

«27» ՀՈՒՆՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան **27.01.2022թ.**

2022 թվականի հունվարի 25-ին տեղի ունեցավ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի /այսուհետ՝ Խորհուրդ/ էլեկտրոնային քվեարկություն:

Խորհրդի էլեկտրոնային քվեարկությունը սկսեց 2022թ.-ի հունվարի 25-ին և ավարտվեց հունվարի 27-ին:

Քվեարկության համար նյութերը հեռակա ներկայացվեցին Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Քվեարկության օրակարգային հարցեր՝

1. Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի գործունեության 2021 թվականի տարեկան հաշվետվությանը:
2. Հավանություն տալ Տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետի և ավագ մասնագետի պաշտոնի անձնագրերին:
3. Հաստատել Տեսչական մարմնի 2021 թվականի 4-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:
4. Հավանություն տալ Տեսչական մարմնի 2021 թվականի 4-րդ եռամսյակում ստացված բողոքների վիճակագրության վերաբերյալ հաշվետվությանը:

Քվեարկությանը մասնակցում էին՝

Վ.Քերոբյան	– ՀՀ էկոնոմիկայի նախարար
Ա.Հովհաննիսյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Լ.Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Ն.Տերյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա.Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Կ.Միրզաբեկյան	- ՀԱՊՀ դասախոս, դոցենտ
Ա.Հայրապետյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Կ.Սահակյան	- ԵՊՀ դասախոս, տնտեսական գիտությունների թեկնածու
Ա.Մկրտչյան	- Հայաստանի ոսկեգործների և ադամանդ արտադրողների ասոցիացիայի նախագահի գլխավոր խորհրդական
Մ.Հակոբյան	- Սպառողների ազգային ասոցիացիայի նախագահ

Էլեկտրոնային քվեարկության արդյունքները օրակարգային բոլոր հարցերի վերաբերյալ՝

Վ.Քերոբյանը՝	կողմ
Ա.Հովհաննիսյան՝	կողմ
Լ.Նանուշյանը՝	կողմ
Ն.Տերյանը՝	չի քվեարկել
Ա.Ասոյանը՝	կողմ
Կ.Միրզաբեկյանը ՝	կողմ
Ա.Հայրապետյանը՝	չի քվեարկել
Կ.Սահակյանը՝	կողմ
Ա.Մկրտչյանը՝	կողմ
Մ.Հակոբյան՝	կողմ

1. Խորհուրդը որոշեց 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի գործունեության 2021 թվականի տարեկան հաշվետվությանը :

2 . Խորհուրդը որոշեց 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հավանություն տալ Տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետի և ավագ մասնագետի պաշտոնի անձնագրերին:

3. Խորհուրդը որոշեց 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հաստատել Տեսչական մարմնի 2021 թվականի 4-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

4. Խորհուրդը որոշեց 8 կողմ և 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հավանություն տալ Տեսչական մարմնի 2021 թվականի 4-րդ եռամսյակում ստացված բողոքների վիճակագրության վերաբերյալ հաշվետվությանը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ _____ Վ.Քերոբյան
ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝ _____ Գ.Սահակյան
ստորագրություն